ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » մարտ 2026թ. No 1164 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/1110-26 առ 03.03.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 5 դեղի գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի մարտի «06» - ի  N1165 - Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն  առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ | Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սինգուլյար | մոնտելուկաստ (մոնտելուկաստ նատրիում) | դեղահատեր ծամելու | 4մգ; (14/1x14/) բլիստերում, (28/2x14/) բլիստերում | Մերկ Շարպ և Դոհմ Բ.Վ., Վարրդերվեգ 39, 2031 ԲՆ Հարլեմ- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Օրգանոն Ֆարմա (ՄԹ), Շոտոն Լեյն, Քրամլինգտոն, Նորթումբերլանդ ՆԵ23 3ՋՈւ, Միացյալ Թագավորություն- բալք արտադրող | Միացյալ Թագավորություն | Օրգանոն Սենտրալ Իստ ԳմբՀ, Վեյշտրասե 20, 6006 Լուցերն | Շվեյցարիա | Դ | 23893 27.02.2026 | 10.03.2026 |
| 2 | Սինգուլյար | մոնտելուկաստ (մոնտելուկաստ նատրիում) | դեղահատեր ծամելու | 5մգ; (14/1x14/) բլիստերում | Մերկ Շարպ և Դոհմ Բ.Վ., Վարրդերվեգ 39, 2031 ԲՆ Հարլեմ- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Օրգանոն Ֆարմա (ՄԹ), Շոտոն Լեյն, Քրամլինգտոն, Նորթումբերլանդ ՆԵ23 3ՋՈւ, Միացյալ Թագավորություն- բալք արտադրող | Մեծ Բրիտանիա | Օրգանոն Սենտրալ Իստ ԳմբՀ, Վեյշտրասե 20, 6006 Լուցերն | Շվեյցարիա | Դ | 23894 27.02.2026 | 10.03.2026 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Սինգուլյար | մոնտելուկաստ (մոնտելուկաստ նատրիում) | դեղահատեր թաղանթապատ | 10մգ; (14/1x14/) բլիստերում | Մերկ Շարպ և Դոհմ Բ.Վ., Վարդերվեգ 39, 2031 ԲՆ Հարլեմ- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Օրգանոն Ֆարմա (ՄԹ), Շոտոն Լեյն, Քրամլինգտոն, Նորթումբերլանդ ՆԵ23 3ՋՈւ, Միացյալ Թագավորություն- բալք արտադրող | Մեծ Բրիտանիա | Օրգանոն Սենտրալ Իստ ԳմբՀ, Վեյշտրասե 20, 6006 Լուցերն | Շվեյցարիա | Դ | 23895 27.02.2026 | 10.03.2026 |
| 4 | Աբրոբիոն | ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ) | օշարակ | 6մգ/մլ; 125մլ ապակե շշիկ | Հելփ Ս.Ա. Պեդինի Իոանինոն, Իոանինա, 45500 | Հունաստան | Հելփ Ս.Ա., 10 Վալաորիտոու փ., ԳՌ 144 52 Մետամորֆոսիս, Ատիկա | Հունաստան | ԱԴ | 23896 27.02.2026 | 10.03.2026 |
| 5 | Գլիցիրոն Դեղահատեր | մոնոամոնիում գլիցիրիզինատ (գլիցիրիզինաթթու), գլիցին, DL-մեթիոնին | դեղահատեր թաղանթապատ | 35մգ+25մգ+25մգ; (100/10x10/) բլիստերում | Մինոֆագեն Ֆարմասյուտիկալ Քո., ՍՊԸ, Զամա Ֆակտորի: 2-2-3, Կոմատսուբարա, Զամա-շի, Կանագավա- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Ակիյամա Ջոզաի Քո. ՍՊԸ, 2-4-21 Հիրատսուկա, Շինագավա-կու, Տոկիո, Ճապոնիա- բալք արտադրող | Ճապոնիա | Մինոֆագեն Ֆարմասյուտիկալ Քո., ՍՊԸ, Շինջուկու Միտսուի Բիլդինգ 2, 3-2-11 Նիշի-Շինջուկու, Շինջուկու-կու, Տոկիո, 160-0023 | Ճապոնիա | Դ | 23897 27.02.2026 | 09.06.2026 |